ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-19/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան « 07» հունիսի 2019թ.

ժամը՝ **14** ⁰⁰

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու
/Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)** Ս. Անանյան, Վ. Թովմասյան

Գնման Պատասխանատու
/Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** Գ. Միրզոյան, Կ. Բզնունի

Գնման Պատասխանատու/Մրցույթի
համակարգող **(ԳՊ/ՄՀմ)** Ժ. Դադիյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված եզրակացության վերաբերյալ տեղեկություններ.
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված եզրակացության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի քարտուղարի կողմից սույն թվականի մայիսի 31-ին հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեից սույն թվականի հունիսի 5-ին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը:

2. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից իրականացված գնահատումների հիման վրա «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀ-ԱՊՁԲ-19/27» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել Աշոտ Զարգանդի Սիմոնյան Ա/Ձ -ին, իսկ 6-րդ և 9-րդ չափաբաժինների մասով՝ Ժորա Մաթևոսյան Ա/Ձ-ին:

2.2 Հանձնաժողովի քարտուղարին.
Պայմանագրի կնքման նպատակով, անգործության ժամկետի ավարտից հետո, Աշոտ Զարգանդի Սիմոնյան Ա/Ձ-ին և Ժորա Մաթևոսյան Ա/Ձ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու
/Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)** _____ Ս. Անանյան

Գնման Պատասխանատու
/Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)** _____ Վ. Թովմասյան

Գնման Պատասխանատու
/Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** _____ Գ. Միրզոյան

Գնման Պատասխանատու
/Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** _____ Կ. Բզնունի

Գնման Պատասխանատու
/Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀմ)** _____ Ժ. Դադիյան